

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԶՈՀԱՍԵՂԱՆ THE ALTAR OF PROVISION

Երբայցիններին 11.9-10 – Հավատով նա պանդուխտ դարձավ ավետյաց երկրում, ինչպես օտարության մեջ՝ վրաններում բնակվելով Իսահակի և Հակոբի հետ, որոնք նույն խոստման ժառանգակիցներն էին: Որովհետև սպասում էր հիմքերով հաստատված այն քաղաքին, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է:

### ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԾՆՆԴ. 22.1-24 – ԱԶԳ, ԵՐԿԻՐ, ՍԵՐՈՒՆԴ

<sup>1</sup> Այս դեպքերից հետո Աստված փորձեց Աբրահամին և ասաց նրան. «Աբրահամ՝: Նա ասաց. «Ահա՛ ես»: <sup>2</sup> Աստված ասաց. «Վերցրո՛ւ քո սիրած միակ որդուն՝ Իսահակին, գնա՛ Մորիայի երկիրը և ողջակե՛զ արա նրան այն սարերից մեկի վրա, որ քեզ կասեմ»: <sup>3</sup> Աբրահամը վաղ առավոտյան վեր կացավ, իր էջի համետը դրեց և իր հետ վերցրեց երկու ծառաներին և իր որդի Իսահակին: Ողջակեզի փայտ կտրեց և ելավ գնաց այն տեղը, որ Աստված ասել էր նրան: <sup>4</sup> Երրորդ օրը Աբրահամն իր աչքերը բարձրացրեց և հեռվից տեսավ այն տեղը: <sup>5</sup> Աբրահամն ասաց իր ծառաներին. «Դուք էջի հետ այստե՛ղ մնացեք, ես և տղան գնանք այնտեղ, երկրպագություն անենք ու վերադառնանք ձեզ մոտ»: <sup>6</sup> Աբրահամը վերցրեց ողջակեզի փայտն ու դրեց իր որդի Իսահակի վրա. իր ձեռքն առավ կրակն ու դանակը, և երկուսով միասին գնացին: <sup>7</sup> Իսահակը խոսեց իր հոր՝ Աբրահամի հետ և ասաց. «Հայր իմ»: Եվ նա ասաց. «Այո, որդի՛ս»: Իսահակն ասաց. «Ահա կրակը և փայտը, բայց ո՞ւր է ողջակեզի գառը»: <sup>8</sup> Աբրահամն ասաց. «Աստված կհոգա իր ողջակեզի գառան մասին, որդյա՛կս»: Եւ երկուսը միասին գնացին: <sup>9</sup> Եւ եկան այն տեղը, որ Աստված նրան ասել էր: Աբրահամն այնտեղ զոհասեղան շինեց, փայտերը շարեց, կապեց իր որդի Իսահակին և դրեց նրան զոհասեղանի վրա՝ փայտերի վրայից: <sup>10</sup> Եւ Աբրահամն իր ձեռքը մեկնեց և վերցրեց դանակը, որ մորթի իր որդուն: <sup>11</sup> Տիրոջ հրեշտակը երկնքից նրան ասաց. «Աբրահամ, Աբրահամ՝: Նա պատասխանեց. «Ահա՛ ես»: <sup>12</sup> Նա ասաց. «Ձեռք մի՛ տուր տղային, ոչ մի բան մի՛ արա նրան, որովհետև հիմա իմացա, որ դու վախենում ես Աստծուց և քո միակ որդուն չխնայեցիր ինձանից»: <sup>13</sup> Եւ Աբրահամն իր աչքերը վեր բարձրացրեց և տեսավ, որ իր ետևի մացառուտի մեջ մի խոյ կա՝ եղջյուրներից բռնված: Աբրահամը գնաց, վերցրեց խոյը և ողջակեզ մատուցեց այն իր որդու փոխարեն: <sup>14</sup> Աբրահամն այդ տեղի անունը դրեց Եհովայիրե. և այսօր էլ ասում են. «Այդ լեռան վրա, ուր Տերը հոգ է տանում»: <sup>15</sup> Եւ Եհովայի հրեշտակն երկրորդ անգամ երկնքիցը Աբրահամին կանչեց, <sup>16</sup> Եւ ասեց. «Անձովս եմ երդվում, ասում է Տերը, քանի որ դու այդ բանն արեցիր և չխնայեցիր քո միակ որդուն, <sup>17</sup> Քեզ օրհնելով կօրհնեմ և երկնքի աստղերի ու ծովեզերքում եղող ավազի չափ կբազմացնեմ քո սերունդը, և քո սերունդը կժառանգի իր թշնամիների քաղաքները. <sup>18</sup> Եւ երկրի բոլոր ազգերը քո սերնդով կօրհնվեն. նրա համար, որ հնազանդվեցիր իմ ձայնին»: <sup>19</sup> Եւ Աբրահամը վերադարձավ իր ծառաների մոտ, և վեր կացան ու միասին գնացին Բերսաբե: Աբրահամը բնակվում էր Բերսաբեում:

## I. ԱՍՏՎԱԾ ՊԱՏՐԱՍՏԵՑ ԶՈՇԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ: GOD PREPARED THE PLACE OF SACRIFICE.

**1** Եւ եղաւ որ այս բաներից յետոյ Աստուած փորձեց Աբրահամին եւ ասեց նորան, Աբրահամ. Եւ նա ասեց, Ահա ես: **2** Եւ նա ասեց. Առ քո սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը եւ **Մօրիայի երկիրը գնա**, եւ այն տեղ նորան ողջակէզ արա այն սարերի մէկի վերայ որ ես քեզ կասեմ:

- **Մորիա = «ընտրված է Եհովայի կողմից»**

**2 Մնաց. 3.1 - 1** Եւ Սողոմոնն սկսեց շինել Տիրոջ տունը Երուսաղէմում **Մօրիա** սարի վերայ, ուր որ երեւեցաւ նորա հայր Դաւիթին այն տեղի վերայ որ Դաւիթը պատրաստել էր **Յերուսաղի Ռոնայի կալում:**

**3** Եւ Աբրահամն առաւօտանց կանուխ վեր կացաւ եւ իր էջի համետը դրաւ, եւ վեր առաւ իր հետ երկու ծառաները եւ իր որդի Իսահակը. Եւ ողջակէզի փայտ ձղեց, եւ վեր կացաւ գնաց այն տեղը, որ Աստուած իրան ասել էր:

- **Երուսաղէմից Բերսաբե հեռավորությունը 70 կիլոմետր է: Այս օդային ճանապարհի հեռավորությունը հավասար է 43 մղոնի:**

## II. ԱՍՏՎԱԾ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՐՄԻՆԸ ՄԵՐ ԶՈՇԸ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ: GOD PREPARED JESUS' BODY TO BE OUR SACRIFICE.

- **Քրիստոսը հնազանդ էր Աստծուն մինչև մահ և այն էլ խաչի մահը (Փիլիպ. 2.8):**

**Եբր. 10.4-5 - 4** Վասնզի անկարելի է որ նոխազների եւ ցուլերի արիւնը մեղքեր վեր առնէ: **5** Նորա համար աշխարհք մտնելիս ասում է. **Ձոհ եւ պատարագ չկամեցար, բայց մի մարմին պատրաստեցիր ինձ համար. (Սաղմոս 40:6, Ելից 40:6)**

**Գործք Առաքելոց 2.23** – Նրան Աստծու **սահմանած խորհրդով ու կանխագիտությամբ** անօրենների ձեռքը մատնեցիք և փայտի վրա գամելով՝ սպանեցիք:

## III. ԱՍՏՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՄԵՋ ԷՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ: GOD RAISED US UP TOGETHER WITH CHRIST.

**4** Եւ երրորդ օրն Աբրահամն իր աչքերը բարձրացրեց, եւ հեռուից տեսաւ այն տեղը: **5** Եւ Աբրահամն ասեց իր ծառաներին. **Դուք այդ էջի հետ այստեղ մնացէք, եւ ես եւ տղան մինչեւ այն տեղ գնանք եւ երկրպագութիւն անենք, եւ ձեզ մօտ ետ կդառնանք:**

**Եբր. 11.17-19 - 17** Հաւատքով Աբրահամը Իսահակին պատարագ մատուցրեց երբոր փորձուեցաւ. եւ միաձնին մատուցանում էր նա որ **խոստմունքն ընդունել էր,** **18** Որ ասուեցաւ թէ Իսահակով քեզ զաւակ կկոչուի: **19** Մտածելով թէ Աստուած կարող է մեռելներից էլ յարուցանել. ուստի օրինակի համար էլ ընդունեց նորան:

**Փիլիպ. 3.10-11 - 10** Որ ճանաչեմ նորան՝ եւ նորա յարութեան զօրութիւնը՝ եւ նորա չարչարանքի մասնակից լինելը, նորա մահուան կերպարանակից լինելով. **11** Որպէսզի մեռելների յարութեանը հասնեմ:

- **ԽՈՍՏՈՎԱՆԻՐ ԵՎ ՀԱՎԱՏԱ**

**Եփեսացիս 2.6** – “Նրա հետ մեզ հարություն տվեց և նրա հետ նստեցրեց երկնքում՝ Քրիստոս Յիսուսում,”

- **Հռոմեացիներին 8.11** – Եվ եթե Յիսուսին մեռելներից հարություն տվողի Հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգու միջոցով, որ բնակվում է ձեր մեջ:

## **ԱՄՓՈՓՈՒՄ**

**Նա կհիշվի որպես «Մորթված Գառնուկ» (Գառ, որը մորթվեց):**

***He will be remembered as the Lamb “who was slain”.***

Հայ. 5.12-13 - <sup>12</sup> Որ մեծ ձայնով ասում էին. Արժանի է մորթուած Գառն առնելու եւ զօրութիւն, եւ հարստութիւն, եւ իմաստութիւն, եւ կարողութիւն, եւ պատիւ, եւ փառք, եւ օրհնութիւն: <sup>13</sup> Եւ ամեն ստեղծուած, որ երկնքումն է, եւ երկրի վերայ, եւ երկրի տակ, եւ ծովումը. եւ նորանք ամենը որ նորա մէջ են, լսեցի որ ասում էին. Աթոռի վերայ նստողին եւ Գառին լինի օրհնութիւնը, եւ փառքը, եւ կարողութիւնը յաւիտեանս յաւիտենից: